

աշխատեցանք ցոյց տուէք թէ օտա-
րութիւնը չէ կրցեր մոռնել այն սէրը
որ ունիք զէպի ձեր ծննդավայրը, զէ-
պի անոր կրթական բարոյական գործը
Վարագ այդ ակնկալութիւնն ունի
ձեզմէ, այդ կապստն ձեզմէ Վարա-
գայ 50 որբերը եւ Վասպուրականի
այն բազմաթիւ անոթ, անտէրունջ եւ
սովորուկ մանուկ-պատանիները, ո-
րոնք շարունակ Վարագայ դռները կը
բաղխեն:

Այդ կապստն ձեզմէ Վարագայ Պատ.
հոգաբարձութիւնը, ամբողջ Վասպու-
րականի դպրոցի համակիրները, ամբողջ
հայ հասարակութեան եւ Վարագայ
վարժարանի արեւմտ հիմնադիրը,
Հայրենակիցներ,

Հիւսեցէք գեղեցիկ փունջ մը այն
պսակի համար, որով այս տարի պէտք
է պսակուի Վարագայ ժառանգ. Վար-
ժարանը եւ իր արթուն պահպան Հայ-
րիկը:

Տնօրէն-Ուսուցիչ Ժառ. Վարժ.
Վարագայ
Ա. ԴԱՐՔԻՆԵԱՆ

Յիշեալ նամակը եւ կոչը արգէն
մանրամասնութեամբ կը բացատրեն
գործի վեհութիւնը եւ անհրաժեշտու-
թիւնը: Լիայոյս ենք թէ՛ ինչպէս ու-
րիշ առթիւ արտասահմանի պարտա-
ճանաչ հայ հասարակութիւնը չէ զլա-
ցած իր բարոյական ու ներթափան-
ժանակցութիւնը, այս անգամ եւս պի-
տի նպաստէ սոյն ձեռնարկին:

Ուրախութեամբ կը յայտարարենք
թէ՛ ըստ մեր խնդրանք, արժ. Տ. Ա-
րիստոյով քնն. Թորոսեան, Տ. Տ. Ա.
Սարուխանեան եւ Ա. Մէլիսեան սի-
րով յանձն առած են յանձնախումբի
անդամակցութիւնը: Անոնք որ դիւ-
րութիւն չունին իրենց նպատակները
ուղղակի Վան դիկել, կարող են յանձ-
նախումբին դիկել:

Յ. Կ. Ճանկիրեան
Հասցէ՝
Ա. ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆ—Վանա

ԿԸ ՓՆՏՈՒՈՒԻ

Օննիկ Ռափայէլեան, Պոլսեցի,
քարագործ աղօթիքի, որը այժմ
կը գտնուի Պուլկարիոյ մէջ, Հաս-
ցէ՛ն գիտցողներէն կը խնդրուի
իմացունել Մ. Գեորգ Այվազեա-
նի, ճաշարան «Ասէտինեմի»
ՍՕՖԻԱ

Ա. ԵՐՏԱՆԵԱՆ

85

ԱՌԱՋԱԿԱՊԵՏԸ



ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՌԱՋԱԿԱՊԵՏԸ


(Շար. նախորդ թիւէն)

«Մեծ մարդիկ աննշան կեանքի մը
«մէջ չեն պարկիր. անոնց
«նոյննեան պէս՝ մեծ է
«աննց պատմութիւնը...»

Այն արկածալից խաղատա՛նջ ու
տաճանելի՛ կեանքը զոր ունեցաւ մեծ
մարդ մը, դժուար է ասանկ պատկեր
պատմութեան մը մէջ ամփոփել:

Աւագակապեալ մեծ մարդերէն էր.
հետեւեալը՝ անոր պատմութիւնն ալ
մեծ պիտի ըլլար:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ



Խոնավութիւններ Գեորգիանի մէջ—
Իշխան էլ Տահուրի ապստամբու-
թիւնը.— Նախարարաց համաձայնու-
թիւնը Բաղրամիսին հետ — Եւրոպա-
կան պետութիւնները Պարսկաստանի
հանդէպ:

Լրացուցիչ ընտրութիւններու առ-
թիւ ծանր խռովութիւններ ծագեցան
Գեորգիանի մէջ. այս քաղաքը արեւ-
մտեան Պարսկաստանի գլխաւոր վա-
ճառանոցներէն մին է, ուր օտար գաղ-
թականութեան մեծամասնութիւնը կը
կազմեն Ռուսներ, եւ Անգլիացիներ:
Քաղաքին ժողովուրդը երկու մասի
բաժնուած է, որմէ մին կառավարու-
թեան պաշտպանութիւնը կը վայելէ
զոր կամքաստաններ թէ ճշտու կը բա-
նեցնէ նախկին վարչական գործիւնը
վերահաստատելու նպատակաւ. այ-
սինքն բացարձակ միապետութիւնը:
Բուհարկութեան ատեն ազատական
կուսակցութիւնէն բաւական թուով
ընտրողներ ձեռքարկուած ըլլալով, ժո-
ղովուրդը զէնք առաւ եւ զինուորնե-
րուն վրայ խուժեց՝ որոնք թէհրանէն
եկած էին. ասոնք ալ իրենց կարգին
սկսան տունները թալանելու: Այս պատ-
ճառաւ ժողովրդին մէջ մղուած կռուին
մէջ բազմաթիւ մարդիկ մեռան. երկու
հազարէն աւելի անձեր Բրիտանական
հիւպատոսարանը ապաստանեցան: Գե-
որգիանի վիճակը շատ ծանրացնողը
այն է որ, այս քաղաքը Բիւրս ցե-
ղերու դրացի կը գտնուի, որոնք խոս-
վութեան առաջին լուրը առնելուն,
զինուած եկան քաղաքին շրջակայ
դաշտը լեցուցան: Իրենց խաժամուժ
հեծեալներով այս քաղաքը բոլորովին
կողոպտեցին երեսունի չափ գիւղեր
այդ դաշտին ու գաւառին մէջ, կառա-
վարչին խնդրանքին վրայ, թէհրանի
Ռուսական զեսպանը նոյն տեղը զըր-
կեց քանի մը հորիւր խաղախ Ռու-
սոյ այս միջամտութիւնը կարգարա-
նայ Շահին զինուորներուն անիշխա-
նական վիճակովը եւ հետզհետէ աճող
անպահովութեամբ որ առաջ կու-
գայ բոլոր բաղամփոխ կեդրոններու
մէջ:

Իշխան Սալար էլ Տահուրեան իր եղ-
բոր կառավարութեան ղէմ բոլորովին
ըմբռնեցան, ճակատ կազմած է գլու-
խը անցած 3500 զինուորներու եւ 1200

հեծեալներու: Յունիս 10ին ասիկա
յարձակում կրեց զօրավար Հիւսամ Միւլ-
քէն, Նիհալէ աւանին մօտ. իշխանը
խիստ արեւահեղ կուր մը մղեց, բայց
մեծ կորուստներ տալէ յետոյ ետ քաշ-
ուեցաւ:

Մինչ պետութեան շատ մը կեդրոն-
ներուն վրայ ամենօրեայ խռովու-
թիւնները գործունեայ ժողովուրդը
սարսափի կը մատնեն, անդին թէհ-
րանի Բաղրամիսը քի վիճարանու-
թիւնները կը շարունակէ շատ անի-
րականալի օրինագծերու վրայ. ժողո-
վուրդի ներկայացուցիչներուն եւ նա-
խարարութեան միջեւ անհասկացողու-
թեան շրջանէ մը յետոյ, նախարարու-
թիւնը ձեռք մը ըրաւ մերձեցման եւ
վերջապէս համաձայնութեան մը հասան:
Արտակարգ նիստի մը մէջ նախարա-
րութեան բոլոր անդամները ներկայա-
ցան խորհրդարանին առջեւ, եւ այդ
օրէն ի վեր, նախարարները՝ իրենց
պաշտօնը չը ներած պարագաներէն զատ
ներկայ կը գտնուին կանոնադրապէս
Բաղրամիսին վիճարանութիւններուն,
պատրաստ հաշիւ տալու իրենց մա-
տակարարութեանց մասին. ահա այս
բանն էր որ երեսփոխանները խստիւ
կը պահանջէին:

Պալատին շրջանակներուն մէջ խիստ
քիչ վստահութիւն ցոյց կը տրուէ ազ-
գային ժողովի որոշուիմունքին, երես-
փոխանաց պակասը լրանալու պարա-
գային: Պալատը կը վախճայ որ յա-
ռաղիմական կուսակցութեան նոր
ընտրուելիք անդամները պիտի յաղ-
թահարեն այժմ մեծամասնութիւն կազ-
մող չափաւորական անդամները:

Միւս կողմէ հասկցուած է որ կա-
ռավարութիւնը այլեւս չը կրնար վըս-
տահիլ բանակին հաւատարմութեան
վրայ որուն լաւագոյն տարրը Դուրիս-
տանի կառավարիչ իշխանին ղէմ պա-
տերազմի գաղաժ է:


Ելեւմտական կացութիւնը որ բար-
ւոքած էր իկզային դրամատան հաս-
տատուածով, կրկին անկում կրեց ներ-
քին փոխառութեան հանգանակու-
թիւններով: Եթէ մասնակցողները յո-
ժար կամքով ալ տուած ըլլան, գոյա-
ցած գումարները փոքր են, թէեւ մաս-
լոյ մէջ մեծազորող կը հռչակեն: Պէտք
պիտի ըլլայ արտաքին փոխառութեան
մը գիւծելու եւ չը գիտցուի թէ ինչ
կերպով պիտի կրնան գտնել մաքսե-
րուն մնացած հասոյթը ապահովութիւն

ցոյց տալով եւ սակայն, վեց ամիսէ
ի վեր հասոյթները մէկ երբորդի իջած
են. եւ այս նուազումը օրէ օր կը շեշ-
տուի:

Ռուսիան ուրիշ հոգեր ունենալով
եւ արգէն Պարսկական թագաւորու-
թեան հիւսիսային կողմը կատարելա-
պէս տեղաւորուած, կը թուի թէ բնաւ
չը շահագրգռուի այդ խնդրով, գէթ
առայժմ Գալով Անգլիոյ, սա կը սպա-
սէ ձեռքերը իր քսակին վրայ, միայն
էն նպատաւոր պարագային բանալու
համար: Միայն Գեորգիանական ընկերու-
թիւնները միշտ դարանակալ կըսպա-
սեն առանց յոգնելու պատեհ ժամուն
բեմ մտնելու համար, պատրաստ հոս-
չոր գումարներ տալու ի փոխարէն դեռ
չը ձեռուած առանձնաշնորհումներու:
Սակայն օրո՞նք իսկապէս պիտի կըր-
նան երկար ժամանակի մը համար Պա-
րսկաստանի թագաւորութիւնը իրենց
կամքին ենթարկելու իրաց ընթացքէն
կարելի է գուշակել արդիւնքը:

Գուռ. Էտօքեհէն Հ. ՌԸՆՈՒ

ԿԻՐԱԿԵՐԵԱՑ ԱՏԵՆԱԾՈՒԹԻՒՆԸ



Զպիտի ուղէի իսկ հրապարակ գալ
եւ ներդրութիւն յանձն առնել, քանի մը
խօսք ընելու, Պրն. Արարատեանի
կիրակնօրեայ առնախօսութեան առ-
թիւ որ իր բոլոր էութեամբ լեցուած
էր սուտերով, որպէսզի մոլորցնէ հա-
սարակութեան միամիտ մասը: Եւ չը
պիտի ուղէի նաեւ այդ պարոնով ըզ-
բաղուիլ եթէ պարոնը չունենար փութ-
կոտութիւնը վարկաբեկելու համար
Հնչակեանները եւ Հնչակեանութիւնը,
զանոնք խմբակ անուանելով:

Բայց ակամայ պիտի գիշանիմ քանի
մը խօսք ընել այդ պարոնին եւ կամ
այդ պարոնը համոզողներին որոնք «կը
ճանչնան թէ Հնչակեան կուսակցու-
թիւնը դասակարգային կռիւներով
զբաղուող կուսակցութիւն մըն է».—
առանց ամնալու կը խօսի պրն. Եւ
բնաւ չի մտաբերի կարնոյ երեք
անգամուայ ցոյցը, Սասնոյ ապստամ-
բութիւնը, Չէլթեանի չորս ամսուա-
գիմաղթութիւնը, եւ անթիւ հերոսա-
կան խումբեր երկար ժամանակ թուր-
քիոյ մէջ գործած քաջագործութիւն-
ները: Արդ, կը հարցունեմ պրն. ին-

սիւս, որուն աչքը լեցուեցաւ արցուն-
քով:

— Դէպի Պարսկաստան:
— Ինչ կայ այդ երկիրը... գոնէ
Ռուսաստան երթալիք այս անգամ,
չըլլա՞ր:

— Ռուսաստան... միեւնոյն բան
է՛ բարբարոս թուրքիան ու անխիղճ
Ռուսաստան: Մի կարծէք թէ այդ
ժողովուրդը քրիստոնեայ անունին
տակ պիտի պաշտպանէ մեզ. ոչ. ա-
նիկա մութին մէջ դարանուած անանկ
ժողովներ ունի, որ ինկող մը չա-
զատի: Թիւրքիա մեր ազգին ճիւղերը
կը սղոցէ ու չի նայիր անոր կանաչ-
նեւուն, իսկ Ռուսիա արմատէն խն-
լու կախաւոր ու բոլոր ուժով կը փո-
րէ, կը պղծէ՝ երբեմն լուս երբեմն
զայրացած եղանակով մը: Դարձեալ
Պարսկաստան, իր զարաւոր յիշատակ-
ներով մեզի կապուած, այն երկիրն է,
ուր աչքերնիս կարող ենք բանալ: Ա-
հա պատճառ մը, որ մտքիդ մօտիկ է,
անանկ չէ՞, սիրելի Լուսիս:

Տառապանքի օրերու մէջ իր կեան-
քը հայրենեաց ու ազգին նուիրող
մանկամարդ աղջիկը միայն հառաջանք:

մինչեւ որ ցուրտ փոս մը եւ սեւ հող
մը ծածկեցին զինքը:

Զինակիրներու պետը, ինչպէս տե-
սանք, բանտին մէջ պահած թոյնով
վիրջ տուա իր կեանքին: Աւագակա-
պետը՝ խռնուած քաղմութեան հետ կը
գտնուէր, համոզուած էր տեղի ունե-
նալիք սարսափի իրականութեան, ո-
րովհետեւ այդ թոյնի սքուակը ինքը
յանձնած էր:

Արդ, Աւագակապետը նոյն օրը
մեկնեցաւ քաղաքէն ղէպի այն գեղը,
ուր պահուած էին Լուսիս եւ Նուրի-
մէ:

Երկու մանկամարդ աղջիկները դառն
անձկութիւնով մը գրկեցին զինքը՝
տաք արցունքներ թափելով անոր
ձերքիւրուն վրայ:

— Լուսիս, երկու տարի է որ մեր
պաշտելի Հայրենիքին մէջ կը գտնու-
ւիք, ըսաւ Աւագակապետը. հիմակ
բայց կը հարկադրէ մեզ ժամանակ
մըն ալ թողուլ զայն ու երթալ օտար
երկիր մը: Ե՛հ, Աստուծոյ կամքը...
կարելի է չուտով կը վերագտնանք:

— Դէպի ո՞ւր, հայր, հարցուց Լու-

այն ատեն՝ գաղափարները գոյու-
թիւն ունէ՞ր, եթէ ոչ նոր կազմա-
կերպութիւն սկսած էր:

Պիտի խնդրէի նոյնպէս, պրն. Ատե-
նախօսէն, ինչպէս հոս իր ատենախո-
սութիւնը, միմիայն ուրիշ կուսակցու-
թիւններ վարկաբեկել ջանալու տեղ ա-
ւելի լաւ կընէր, իրար հաշտեցնելու,
համերաշխ գործունէութիւն ունենալու
վրայ խօսչմ, քան թէ փոքր աւելի խո-
րունկանելու, ժողովուրդի փաղձաճը
քնաւ երբէք չէ կուսակցութիւն մը
վարկաբեկել ուրիշ կուսակցութիւն մը
վեր հանելու համար: Արդէն երբ պրն.
ատենախօսը ժողովը սկսաւ, մատին
փաթաթեց ընել սկսաւ Հին Հնչակեան
կեդրոնի համերաշխ գործունէութեան
մասին եղած բանակցութիւնը, եւ դա-
նիկա անկարեւոր դատեց: Կարծես
պարոնը նախապատրաստուած եկած
էր այս լուրը վառնալի ժողովուրդին
յաղորդելու, թէ՛ պարագայ բան է կա-
րեւորութիւն չեն տար:

Դժբաղդաբար հայերս հիանալ գիտենք
ամեն ատենախօսի ըսածները ծափա-
հարութեամբ պսակելու, առանց քնն-
նադատելու թէ ինչ է ըսածները: Եղ-
բայրներ, խորունկ կերպով ուսումնա-
սիրելու ենք մեր ազատագրութեան
հարցը՝ առանց տարուելու եւ չլանա-
լու այն գաղափարէն, որը իրենց
մօթ չինած են կարգ մը աճապարաներ
մարդասէրի հաւանութիւնը ունենա-
լով... Դժբաղդաբար կը խորեն մեզ,
Մ. ՍՈՒՐԵՆ

ՈՒՍՈՒՑԶԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ՅԱՅ ՈՒՍՈՒՑԶ.
ՄԻՈՒԹԻՒՆ
թիւ 166

Ռուսչուգ, 13 յունիս

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ

Պատ. Ռաւոյց. Մարմիններու

Պուրկարիոյ Հ. Ո. Միութեան
Պատգամաւորական ժողովը տեղի
պիտի ունենայ վառնայ յուլիս
20ին:

Կը խնդրուի Ուսուցչ. Մար-
միններէն որ հաճին գտնէ երկու
որ առաջ զրկել իրենց պատգա-
մաւորները:

Գործադիր Մարմին կողմէ:

Ատենադպիր Ատենապետ
Մ. Յ. Գուրաքաղեան Ա. Ապագեան

մը հանեց բերնէն ու մրմնջեց.

— Դուն գիտես, հայր, Բայց...
արդեօք անգամ մըն ալ չի պիտի՞ կա-
րենամ պաշտելի վանականի շիրիմը
տեսնել:

— Ուղածդ թող այդ ըլլայ... Ընդ-
հաաեց Աւագակապետը: Այս գիշերը
յարմար է: Պատրաստ եղիր:

Արգարեւ, գիշերուան ժամը չորսի
ատեններ Աւագակապետն ու Լուսիա
քաղքին այն անշուք բայց զոհերով լի
գերեզմանատունին մօտեցեր էին ուր
թաղուած էր Վանական:

Մուտք էր գիշերը: Բարդ ու փոթոր-
կայոյց ամպերով ծածկուած էր երկին-
քը: Սաստիկ հով մը կար սր ծառերու
խշուող ճնշուուն հետ խառնուելով ա-
հաւոր աղմուկ մը կը հանէր:


Աւագակապետը գիտէր թէ Վանակա-
նի անխնայ շիրիմը գերեզմանատան
մէկ անկիւնը կը մնար, հասարակաց
ուղիին ճիշտ կիցը. հետեւաբար ա-
ռաջնորդեց աղջիկը հոն ու ցոյց ունա-
լաւ:

— Ահա հայրենեաց ու ազգին հա-
մար զոհուող մեծ մարդուն անխնայ
շիրիմը... մրմնջեց Աւագակապետը:

Օ Ր Ա Ն Ր Ք

- 1) Ընտրութիւն Դիւանի և հասե-
տատուժ օրակարգի
- 2) Տեղեկագիր Գործ. Մարմնոյ
- 3) Համարատուութիւն Գործադ-
ր. Մարմնոյ և Ուսուցչ. Մարմիններու
- 4) Համարատուութիւն խմբագ-
րութեան
- 5) Մարգրի և Կանոնագրի փո-
փոխման մասին խորհրդակց.
- 6) Դասագրքերու միօրինակու-
թիւն
- 7) Դասաւանդութեանց մէթոտ-
նիւրը
- 8) Միութեան գանձը
- 9) Ուսուցչիներու նիւթական
ապահովութեան հարցը
- 10) Տէնգաւոր ուսուցչիներ պատ-
րաստելու խնդիրը
- 11) Կրթ. օրէնքներու ուսումնա-
սիրութիւն
- 12) Մասնաւոր վարժարանները
- 13) Ռաւիլիւրային ծաւալը և ուղ-
ղութիւնը
- 14) Պուրկարիոյ տարբեր Ուսուցչ-
ական Միութեան հանդէպ վե-
րաբերմունք
- 15) Ընտրութիւն Գործադիր և
խմբագրական մարմիններու
- 16) Դաքիւքայի խնդիրներու

ՍԵՒ ՁԵՌՔԻ ՀԱՅՈՒ ՄԸ ԴԵՄ



Նիւ Եօրքի ծանօթ հայ մածնավա-
ճառ Տր. Մարգար Տատուրեան երկար
ատենէ ի վեր մահուան սպառնալիքի
ենթարկուած է գաղտնի ընկերութեան
մը կողմէ, որ 10,000 տուրք փրկանք
կը պահանջէ իրմէ: Հասնող նամակները
ստորագրուած են «Սեւ Ձեռք», որ ըս-
պանալիքով դրամ փրցունող Իտալա-
կան-Մաքիական ընկերութեան մը ա-
նունն է: Ինքնին գարմանալի է որ
այս ընկերութիւնը՝ Նիւ Եօրքի մէջ գո-
յութիւն ունեցող ամէն ազգէ հաղա-
բաւոր աչքառու հարուստները ձգած՝
Տր. Տատուրեանի պէս աննշան հայ
ուսնեօրի մը ետեւէն ինկած ըլլայ:

Լուսիա ինկաւ այդ ցուրտ հոգին
վրայ... գրկեց ու սկսաւ համբուրել:
Ու իր կարօտալի աղցուն ջրերը թա-
փելէ ետքը՝ հեծկտալով բաժնուե-
ցաւ:

Հետեւեալ գիշերը գաղտնի ճամբա-
յով մը Պարսկաստան անցաւ Աւագա-
կապետը՝ Նուրիմէն եւ Լուսիան հետն
առած:

Պարսկաստանի մէջ անծանօթ մնաց
ամենուն ու չը տայնեց իր ով ըլլա-
լը: Իրի ժամանակէն թողուց աղջիկ-
ները բարի մամիկի մը պաշտպանու-
թեան ներքեւ, ինքը Հայոց Հայրիկին
մօտ գնաց:

Երեղ ու ճակատաւոր կան կարասինե-
րով լի վեհարանի մը մէջ նստած էր
Հայոց Հայրիկը: Անոր բարձր հասակը
կըսած չէր. անոր մեծ ու վեհ ճակատը
գալարուն կնճիռներ չը կային. անոր
աչքերէն կը ցոլային մարդու հոգին
փոթորկող բոց մը եւ արտակարգ
ցնցում մը... անկա իր յաղթ ու պար-
թեւ մարմնոյն ներքեւ պահած էր
նրբաւարդական կորովի սիրտ մը եւ
վեհ մ հոգի մը՝ ճառագայթուած պաշ-
տեցում մը բովանդակ երեւոյթով: Կը

Բայց վերջապէս աշխարհ է կըլլայ-կըլ-
լայ:

— Անցեալ երեքշաբթի, այն օրն
գաղտնի ընկերութեան կողմէ «գոթո-
խային մեքենայ» մը կը զրկուի Տր.
Տատուրեանին: Սրկարի տուփ մըն է
որուն մէջ ճարտար կերպով գետեղ-
ուած է «գոթիային մեքենան», այն-
պէս որ բացուելուն պէս պայթումը
տեղի կունենայ: Տ. Տատուրեան Ուր
բանար տուփը, կասկածելով վրայի
հասցէէն, որ միեւնոյն գիրն էր ինչ
գրով որ ուղղած էին իրեն նախորդ
սպաննագրերը: Տուփը ոտիկանու-
թեան կը յանձնուի՝ որ պէտք եղած
միջոցներով զայն բանալով երեւան կը
բերէ «գոթիային մեքենան»: Նիւ Եօր-
քի թերթերուն անցեալ շաբթուան ա-
մենէ «սէնսէշնըլ» այժմէն թիւններէն
մէկն էր այս գէպքը: Մշեցի Տէր Գաս-
պարի վրայ գործադրուած ահաւի ոճի-
րին հետ Հայկական բորսականութիւն
նիւրն կըլլայ, հայերս կրնանք զգալ:
— Տուփին մէջէն հետեւեալ դիրն ալ
գտնուի է. «Կը յուսանք թէ ասիկա
քեզ պիտի սպաննէ, եթէ չըսպաննէ,
մենք նորէն քու «հարէթ» պիտի գանք»
«Սեւ Ձեռք»

Տր. Տատուրեան կը յայտարարէ թէ
10,000 տուրք «ցնծալու» տրամադրու-
թիւն չունի:

Վերջը բարին ըլլայ: Ա.ԶԳ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամենայն Հայոց վեհ. Կաթո-
ղիկոսը ընդունելով Ամերիկայի
Առաջնորդ տէր Յովսէփ Արքե-
պիսկոպոսի հրաժարականը, Կոն-
գակով մը հրահանգ տուած էր
առաջնորդական նոր ընտրու-
թիւն կատարելու Վիճակին երես-
փոխ ժողովին կողմէ: Վեհ. Կա-
թոլիկոսը ընտրելեաց երկա-
նուն ցանկ մը տուած էր յանձին
Տէր Եղիշիկ արքեպ. Ապահունի
և Տէր Գեորգ Եպիսկ. Իւթիւճ-
եանի, երրորդ ընտրելիին որո-
շումը վերապահելով նոյն երես-
փոլովին:

նայէ՞ր թէ կերպգէր... ահա իր նայ-
ուածքը: Զինաւաճառ մազերը չէ թէ
ծերութեան նշան մը կարտայայտէն,
այլ վեհութիւն մը կը պատկերացնէին
անոր կերպարանքին վրայ:

Աւագակապետը կեցաւ ու գիտեց,
կըսեն թէ՛ մեծ մարդիկ երբ իրարու
կը հանդիպին, անոնց նայուածքները
հոգիի խորութիւնէն կանցնին, ելեք-
տական ուժգին հոսանքներու պէս:

Այդպէս՝ երկու մեծ մարդեր էին
Հայոց Հայրիկն ու Աւագակապետը:
Մին մեծ էր իր խօսքին մէջ. իսկ
միւսը՝ իր գործունէութեան:

Ու Աւագակապետը՝ զգանշացումի
մը գերազանց վեհութեան մը մէջ մօ-
տեցաւ: Հայոց Հայրիկին եւ մրմնջեց:

— Մտալ եմ, վեհափառ:

— Աստուած օրհնէ՛, զաւակս՝ պա-
տաւանեց Հայոց Հայրիկը գէմը կե-
ցող հսկայ մարդուն վրայ նայելով:
Ո՛ր տեղացի ես:

— Մտաղ Վանեցի է...

— Վանեցի՞:

— Այո՛:

— Բաղաբացի՞:

— Ոչ...:

Այս վերջինը մայիս 30-ին
Սարաճեան սրահանի նախագա-
հութեամբ նիստ մը ունենալով,
առաջնորդական ընտրութիւնը
կատարեց: Գուէարկութիւնը գաղ-
տնի ըլլալով հանդերձ Ամերիկա-
յի Հայոց առաջնորդ ընտրուեցաւ
միաձայնութեամբ Տէր Եղիշիկ
Արքեպ. Ապահունին:

— Նաբօլիի մէջ մեռեր է բնիկ
Վանեցի խոչիկ Ղազարեան 90
տարեկան: Հանգուցեալը 70 տա-
րիէ ի վեր հոն հաստատուած է
եղեր առեւտրական գործերով:
4000 ոսկիի չափ հարստութիւն
մը ձգած է, որուն մէկ մասը կը
տակեր է վանի ազգ. հաստատու-
թիւններուն:

— Հանրածանօթ կաթ. ընտանի-
քէն Անտոն Կէօյ օղու Բերայի
Մկրեան քահանային միջոցաւ
գաւանագիր մը ներկայացուցեր
է Պօլսոյ Կրօն-Ժողովին, յայտնե-
լով որ Հայ-Հռոմէական եկեղե-
ցիէն բաժնուած է և կը խնդրէ
ընդունուիլ Հայ Եկեղեցւոյ զա-
ւակաց շարքին մէջ:

— Ամերիկացի միլիոնատէր
Ճէյ Կուլաի ընտանիքէն Օր.
Կուլտ որ Կ. Պոլիս կը գտնուի,
մօտ 50,000 Պր. նուիրատուու-
թիւններ ըրեր է Թուրքիոյ բո-
ղոքական հաստատութիւններու:

— Ամերիկայի մէջ կը շարու-
նակուի տեղ տեղ Հայոց ինպատ-
շարժումը: Ամերիկայի պատուի-
րակներու միջոցաւ Լա-Հէյի հա-
մաժողովին ներկայացնելու հա-
մար Հայաստանի բարենորոգման
հարցը:

— Ինքզինք Յովհաննէս վրդ.
Մուրատեան անուանող սուր վար-
դապետ մը՛մը յայտնուել է Ե-
գիպտոսի մէջ: Անոր խաբեբայ
մը ըլլալը հաստատուելով, ժողո-
վուրդը առաջնորդարանի սրա-
հին մէջ խաչաւալը և վերարկուն
բռնի կը քաշէ կը հանէ:

- Հապա՛:
- Մօտիկ գեղերէն եմ:
- Աղէկ. նո՞ր եկած ես:
- Ամիս մը չը կայ:
- Ինչպէ՞ս է երկիրը:
- Մի հարցունէք... այնքան թըլ-
ուառ է ժողովուրդն, որ իր աւերակ-
ներուն մէջ անգամ տեղ չունի թաղ-
ուելու:
- Գիտե՛մ, զաւակս, գիտեմ... Ժո-
ղովուրդիս թշուառութեան չափն ան-
ցաւ... Աստուած ինքը գթա՛յ...
- Բայց, վեհափառ, սա քրիստոն-
եայ կառավարութիւններն ի՞նչ կըսեն
... ի՞նչ տրամադրութեան մէջ են...
- արդեօք պիտի թողուն որ ժողովուրդ
մը իր արեան լիճերուն մէջ խղճուի...
- Մթին, գիշերուան խաւարին պէտ
մթին, ստուեր մը պատկերուեցաւ
Հայոց Հայրիկի յիշատիկ վրայ, ու ա-
նոր մեծ ու վեհ աչքերու մէջ արցուն-
քը չողաց գառնութեան ու կսկիծի մը
բովանդակ երեւոյթով:

(Ընտանեակային)

